

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՍՈՒԹՅՈՒՆ



ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀԱՄԱԻԿ ԶՈՒՀԱՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

ԲԱՑ ՆՈՐԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հիմնաբառեր. տեխնոլոգիական փոփոխություններ, զարգացում, նորաստեղծություններ, բաց նորաստեղծություններ, փակ նորաստեղծություններ, տեխնոլոգիաների փոխանցում, արտոնագրային համակարգ

Մեթոդաբանական անդրադարձ տեխնոլոգիական փոփոխություններին. մոտեցումների էվոլյուցիա

Զարգացման ու արդիականացման հիմնախնդիրները, թերևս, մշտապես գտնվել են տեսաբանների, նաև տնտեսությանն առնչվող քաղաքական որոշումներ ընդունողների ուշադրության կենտրոնում: Դրանց անդրադարձել են ինչպես նորաստեղծության, այնպես էլ քեյնսյան հարացույցի (պարադիգմա) բազմաթիվ հետազոտողներ: Սակայն տեղի ունեցած բազմաթիվ քննարկումների, բանավեճերի, հրապարակումների արդյունքում հարցերը հիմնականում ավելի շատ են եղել, քան պատասխանները:

Խնդիրն այն է, որ տնտեսագիտության ավանդական դպրոցների տեսաբանները հիմնական շեշտադրումներն անում էին (և այժմ էլ անում են)՝ դուրս չգալով ընդհանուր հավասարակշռության հանրահայտ համադրույթի շրջանակներից: Այնինչ, զարգացման և արդիականացման խնդիրները ենթադրում

և պահանջում են տնտեսական ու տեխնոլոգիական փոփոխությունները դիտարկել հավասարակշռության խախտման համատեքստում: Այսպիսի մոտեցումները գերակշռող են վերջին տասնամյակների ընթացքում ինքնահատատման կայուն հայտ ներկայացրած ու տնտեսագիտական այլընտրանքային մոտեցումներ առաջարկող ուղղություններից մեկի՝ ինստիտուցիոնալիզմի ու հատկապես դրա յուրօրինակ ճյուղավորումներից մեկի՝ էվոլյուցիոն տնտեսագիտության շրջանակներում: Ջարգացման ու արդիականացման խնդիրներին տեսական այս համակարգի մոտեցումը ինստիտուցիոնալ է: Մասնավորապես, էվոլյուցիոն տնտեսագիտության շրջանակներում փոխվում է ինչպես մարդուն, այնպես էլ ողջ տնտեսական համակարգը դիտարկելու տեսանկյունը:

Էվոլյուցիոն տեսաբանները հետևում են տնտեսական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին, այլ ոչ թե դիտարկում այնպիսի վերջնական հավասարակշիռ իրավիճակներ, ինչպիսիք ընդունված են նորդասական տեսության մեջ: Տնտեսությունը էվոլյուցիոն տեսության շրջանակներում ուսումնասիրվում է որպես բարդ համակարգ, որի՝ որպես փակ համակարգի պարզեցումն անհնար է, քանի որ բարդ համակարգերում առկա երևույթները կարող են նմանակներ չունենալ, ինչպես փակ կամ մեկուսացած համակարգերում: Այդ իսկ պատճառով, եթե տնտեսական ուսումնասիրությունների հիմնական նպատակը իրականում տեղի ունեցող երևույթների ճանաչումն է, ապա տնտեսությունը պետք է վերլուծության ենթարկվի միայն որպես բարդ համակարգ: Բարդ համակարգերի տեսության հեղինակներից մեկի՝ Բրայան Արթուրի կարծիքով՝ բարդ համակարգը անընդհատ զարգանում է և ժամանակի ընթացքում ուսումնասիրողին ներկայանում անսպասելի կողմերով¹:

Տնտեսագիտության մեջ էվոլյուցիոն գաղափարների ներգրավման հարցում կարևորագույն քայլ է կատարել ավստրիացի տնտեսագետ Յոզեֆ Շումպետերը: Թեև Շումպետերի համար զարգացման հիմնախնդիրը, սկսած տեխնոլոգիական զարգացումից մինչև տնտեսական վերլուծությունների և համակարգերի զարգացում, եղել է կենտրոնական հարց, այդուհանդերձ, նրա «Տնտեսական զարգացման տեսությունը» չի կարելի անվերապահորեն վերագրել տնտեսագիտական մտքի ուղղություններից որևէ մեկին, քանի որ այն ներառում է թե՛ էվոլյուցիոնիզմի տարրեր, թե՛ նորդասական ուղղության դրույթներ:

Յ. Շումպետերը հատուկ շեշտադրում է կատարել Լ. Վալրասի ընդհանուր հավասարակշռության համակարգից իր տեսությունը տարբերակող դիմամիկ տեսակետների վրա: Նրա այդօրինակ «զգուշությունը» պայմանավորված է այն բանով, որ հասկացությունների փոխառումը «կարող է հանգեցնել գիտության մեջ միստիկայի առաջացմանը՝ լրացված «դիլետանտիզմի տարրերով»»²: Ըստ այդմ՝ Շումպետերը բավական հստակ ընդգծել է այն ոլորտները, որտեղ էվոլյուցիոն մոտեցումը կարող է արդյունավետ լինել: Նրա մոտեցման մեթոդաբանական կարևորությունը նախ այն է, որ զարգացման հիմնական պահ է համարվում «նոր համակցության» հայտնաբերումը, երկրորդ՝ այդ նորը և դրա զարգացման հետ կապված գործունեությունը դիտարկվում են որպես գիտակցված կամ չգիտակցված հրաժարում գոյություն ունեցող

¹ Տե՛ս **Arthur B.**, Complexity and the Economy // Science. Vol. 284, 1999, էջ 107:

² **Шумпетер Й.**, История экономического анализа, СПб., 2001, с. 149.

ստանդարտից: Այսինքն, ըստ Շումպետերի, տնտեսության մեջ դինամիկ փոփոխությունները ներծին (էնդոգեն) բնույթի են, պայմանավորված են ներքին դրդապատճառներով: մասնավորապես՝ նորաստեղծություններին դիմելու ներքին ազդակը սպասվող ձեռնարկատիրական շահույթն է, ինչը ստիպում է հրաժարվել հնից՝ հանուն նորի:

3. Շումպետերի այս թեզը հայտնի է «ստեղծագործական ոչնչացում» անվանումով, որը բավական կարևոր դեր ունեցավ տնտեսագիտության մեջ էվոլյուցիոն տեսության զարգացման համար: Խոսքն այստեղ էվոլյուցիայի ընթացքում հնի ոչնչացման մեխանիզմների և նորի ստեղծման ու զարգացման համար տեղ ազատելու մասին է: Ըստ էության, Շումպետերը կարծում էր, որ էվոլյուցիայի գործընթացը հանգեցնում է օպտիմալ մեխանիզմների առաջացման: Ինչի շատ արագ ոչնչացումը բացասականորեն է ազդում տնտեսության վրա, իսկ էվոլյուցիայի դեպքում ոչնչացման գործընթացը նպաստում է նորի ստեղծմանը: Այդուհանդերձ, պետք է նշել, որ գիտնականն իր պնդումների մեջ մնում էր նորոգասականության շրջանակներում՝ որոշ իմաստով անտեսելով «պահանջարկ» գործոնի ազդեցությունը:

Այն աշխատանքների շարքում, որոնցում էվոլյուցիոն հայեցակարգը դիտարկվում է ավելի լուրջ մակարդակում, առանձնանում է նաև Արմեն Ալչյանի «Անորոշությունը, էվոլյուցիան և տնտեսագիտության տեսությունը» հոդվածը (1950 թ.)³: Ա. Ալչյանի կարծիքով՝ արտաքին միջավայրը ոչ թե իներտ է և պասիվ, այլ ակտիվ գործող ուժ է, որ ընտրում է լավագույն որոշում ընդունող ֆիրմաներին՝ անկախ այն բանից, թե ինչ միջոցներով են այդ որոշումները կյանքի կոչվում⁴: Ա. Ալչյանը էվոլյուցիան դիտարկում է առավելապես որպես հավանականային գործընթաց՝ հաշվի առնելով տնտեսական իրականության մեջ առկա անորոշության բազմաթիվ իրավիճակներ: Դրանից ելնելով՝ նա ընդգծում է անորոշության դերի հետադարձ ուսումնասիրության կարևորությունը, երբ արդեն տեսանելի է, թե որ գործողություններն են հաջող արդյունք տալիս, իսկ որոնք էին սխալ⁵:

Հետագա ժամանակաշրջանում էվոլյուցիոն տնտեսագիտության մեջ առավել մեծ ներդրում ունեցան Ռիչարդ Նելսոնը և Սիդնի Ուինթերը (1982 թ.): Նրանց մոտեցումը առանձնացնում է էվոլյուցիոն տնտեսագիտության միկրոտնտեսական ուղղվածությունը, քանի որ որպես գենետիկական վերլուծության ոլորտ է դիտարկվում տնտեսավարող սուբյեկտների (ֆիրմաների) վարքագիծը: Այս դեպքում դա նշանակում է, որ տեխնոլոգիական նորաստեղծությունների գործընթացը սկսվում է առանձին ֆիրմաների մակարդակում և տարածվում տարբեր ճյուղերում ֆիրմաների միջև շուկայական փոխներգործությունների հարթությունում՝ այդպերպ նոր պայմաններ ստեղծելով ֆիրմաների վարքագծի հետագա փոփոխությունների համար և փոխելով ճյուղի բնույթն ամբողջությամբ⁶: Դրանով հանդերձ՝ ֆիրմաների վարքագծի կանոնները թելադրում են նաև ֆիրմայի «գեներ»: Այս ձևով տնտեսագիտության մեջ զարգացնելով էվոլյուցիոն մոտեցումը՝ Նելսոնն ու Ուինթերը ենթադր-

³ Տե՛ս Ա. Ալչյան, Անորոշությունը, էվոլյուցիան և տնտեսագիտության տեսությունը (հայ. թարգմ. Ա. Վարդանյանի), «Բանբեր ՀՊՏՀ», 2012 (1), էջ 11:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 18–19:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 25–26:

⁶ Տե՛ս **Нельсон Р., Уинтер С.**, Эволюционная теория экономических изменений. М., 2002, էջ 68:

րում են, որ շրջակա միջավայրի հետ փոխազդեցության արդյունքում ֆիրմաները կարող են ընտրել վարքագծի որոշակի «հարմար» ռազմավարություններ, այսինքն՝ արտաքին պայմանների փոփոխություններին կարող են արձագանքել իրենց վարքագծի սկզբունքների՝ «հնասովորությունների» փոփոխությամբ:

Տեխնոլոգիական զարգացման երկակիությունը. փոխառե՞լ, թե՞ ստեղծել նոր տեխնոլոգիաներ

Ջարգացող կամ անցումային փուլում գտնվող երկրներից շատերը տեխնոլոգիական արդիականացման և մրցունակության մակարդակի բարձրացման խնդիրները լուծելիս հաճախ ջանքերը կենտրոնացնում են գերազանցապես սեփական ռեսուրսների վրա հիմնված արմատական կամ հենքային, սկզբունքորեն նոր տեխնոլոգիաների ստեղծման վրա՝ անտեսելով միջազգային շուկայում արդեն առկա տեխնոլոգիաների փոխառման կամ նմանակման հնարավորությունները: Սակայն փորձը վկայում է, որ նման երկրների համար այդօրինակ խնդիրների լուծումը չափազանց բարդ է, եթե ոչ՝ անհնար: Ուստի, նրանց որոշ մասն իր ուշադրությունը կենտրոնացնում է առավելապես տեխնոլոգիական նմանակման քաղաքականության վրա:

Գաղտնիք չէ, որ տեխնոլոգիական նորամուծությունները համարվում են աշխատանքի արտադրողականության աճի ու տնտեսության մրցունակության աստիճանի բարձրացման առանցքային գործոններ: Այդ է պատճառը, որ շատ երկրներ ձգտում են իրենց սահմանափակ ու թանկ ռեսուրսների որոշակի մասնաբաժինը ներդնել դրանց ստեղծման ենթակառուցվածքների մեջ (համալսարանական և ազգային լաբորատորիաներ, հետազոտական ինստիտուտներ և կենտրոններ, փորձարարական կառույցներ, գերազանցության կամ տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ, մարքեթինգային ծառայություններ), որպեսզի ինքնուրույն ստեղծեն նորամուծություններ ու դրանց հիման վրա ձեռք բերեն մրցակցային առավելություններ: Այդպիսով՝ հենքային կամ, այլ կերպ՝ պայթյունային նորամուծությունները դառնում են մրցակցային առավելությունների հիմք⁷:

Փաստորեն, հենքային կամ պայթյունային նորամուծություններն ապահովում են ռենտային եկամուտներ (ռենտային մրցակցային առավելություն) ու, միաժամանակ, կարիք ունեն մտավոր սեփականության ուժեղ ինստիտուցիոնալ (պատենտային) պաշտպանության: Իսկ տեխնոլոգիական նմանակման վրա հիմնված նորամուծությունները պարզապես թույլ են տալիս արտադրանքի կենսապարբերաշրջանի ընդարձակման փուլում ունենալ ծախսերի տնտեսման առավելություն:

Այդուհանդերձ, նույնիսկ զարգացած երկրներում բազմաթիվ ընկերություններ ի վիճակի չեն երաշխավորել արմատական նորամուծությունների հաջողությունը: Դրանք, որպես կանոն, ֆինանսավորում է վենչուրային կապիտալը, ու հաջող ելքի համար (հնարավոր կամ սպասվող բարձր շահույթներ) պահանջվում է, միջին հաշվով, առնվազն 8 տարվա ժամկետ⁸:

⁷ Տե՛ս **Christensen C., Anthony S., Roth E.**, Seeing What's Next (Periodical style), *Harvard Business School Press*, 2004: **Chesbrough H.**, The Era of Open Innovation (Periodical style), *MIT Sloan Management Review*, 2003, vol. 44, no. 3, էջ 35–41:

⁸ Տե՛ս **Stuck B., Weingarten M.**, How Venture Capital thwarts Innovation (Periodical style), *IEEE Spectrum*. M., 2005, April, էջ 42–47:

Ակնհայտ է, որ զարգացող երկրներում հենքային տեխնոլոգիական նորամուծությունների բնագավառում հաջողության հասնելու հնարավորությունները շատ ավելի փոքր են, քան զարգացած ու կայացած ինստիտուցիոնալ համակարգ ունեցող երկրներում: Կասկածից վեր է, որ արմատական նորամուծությունները հաջողության դեպքում շեշտակիորեն կարող են մեծացնել արտադրողականությունը: Սակայն դրանց իրականացումը չափազանց ծախսատար ու դժվար լուծելի խնդիր է: Հաջողելու դեպքում կարելի է ակնկալել հետևյալ արդյունքները.

- Ստեղծել արտադրողականության աճի սկզբունքորեն նոր գործոն ու դրա հիման վրա արտադրողականությունը բազմապատկել:
- Կրճատել ինքնարժեքը առնվազն 30 տոկոսով:
- Շահույթի (այլ դեպքերում նաև ռենտայի) հնարավոր բարձր մակարդակը հարկադրում է ձյուղի ընկերություններին՝ հատկապես առաջատարներին, կենտրոնանալ արմատական նորամուծությունների վրա⁹:

Այդուհանդերձ, մեծ շահույթների հեռանկարը նույնքան բարձր ռիսկեր է ենթադրում, քանի որ միտված է սկզբունքորեն նոր շուկաների ստեղծմանը և եղած շուկաներում նոր մրցակցային դիրքերի ձևավորմանը: Հավելաձային նորամուծությունների համար արդյունաբերական միջավայրն այնպիսին է, որ ծագող ռիսկերն ու անորոշությունները գտնվում են որոշակի վերահսկողության տիրույթում, այնինչ արմատական կամ հենքային նորամուծությունների պարագայում ռիսկերը լիարժեքորեն բացահայտելը և գնահատելը չափազանց բարդ խնդիր է, քանի որ այդ դեպքում անորոշությունների մակարդակն է խիստ բարձր:

Հավելաձային նորամուծությունների պարագայում նախագծի նախապատրաստման ժամկետը մեծ չէ. միջին հաշվով կարող է տևել 6 ամսից մինչև 2 տարի, մինչդեռ արմատական նորամուծությունների նախապատրաստումը կարող է տևել 10 և ավելի տարիներ: Առաջին դեպքում նորամուծական գործընթացն անընդհատ բնույթ ունի, դրա փուլերը ենթակա են ձևայնացման (ֆորմալացում) ու հստակ են: Երկրորդ դեպքում գործընթացն ընդհատվող է. մի փուլից մյուսին անցումը կարող է խզվել, քանի որ որոշակի վերանայման ու ռեսուրսների վերախմբավորման անհրաժեշտություն կարող է առաջանալ: Առաջինի պարագայում շուկան նկարագրվում է հստակ ծրագրային առաջխաղացմամբ, մինչդեռ արմատական նորամուծությունների դեպքում շուկայական վարքագիծը շարունակ վերանայվում է շուկայի և տեխնոլոգիաների ուսումնասիրման ընթացքում:

Պետք է փաստել, որ զարգացող ու ինստիտուցիոնալ փոխակերպման փուլում գտնվող երկրները շատ հաճախ գերապատվությունը տալիս են արմատական կամ հենքային տեխնոլոգիաներին՝ նպատակ ունենալով առաջանցիկ զարգացում ապահովելու իրենց տնտեսությունների համար: Սակայն այդօրինակ ջանքերը բավականաչափ բարձր ինստիտուցիոնալ խոչընդոտների պատճառով հաճախ ձախողվում են: Այս պայմաններում առավել նախընտրելի այլընտրանքային վարքագիծը կարող է բաց նորաստեղծական մոդելի հիման վրա տնտեսության արդիականացումը և մրցակցային դիրքերի ամրապնդումը լինել:

⁹ Տե՛ս **Leifer R.** et al, *Radical Innovation* (Periodical style), *Harvard Business School Press*, 2000:

Նորաստեղծությունը նոր պահանջների բավարարմանն ուղղված նոր արդյունքների ստեղծումն է կամ արդեն գոյություն ունեցողների կատարելագործումն ու նորովի մատուցումը, ինչպես նաև դրանց ստացման նոր ուղիների մշակումը: Նորաստեղծական գործունեությունը, որպես նոր բնույթի արտադրանքի կամ մեթոդի ստեղծման գործընթաց, ունի իր առանձնահատկություններն ու բնորոշ գծերը: Նորարարական արդյունքների շուկայի աննախադեպ զարգացումն ուղեկցվում է այնպիսի գործընթացներով, որոնք, չնայած տնտեսության այլ ոլորտների վրա ունեցած իրենց դրական ազդեցության, ի հայտ են բերում նոր խնդիրներ ու դժվարություններ: Սրանք էլ, իրենց հերթին, ունեն ուսումնասիրության կարիք և պահանջում են լուծումներ:

Նորաստեղծությունների այլընտրանքը. գործել բա՞ց, թե՞ փակ միջավայրում

Գոյություն ունեն նորաստեղծական գործընթացների ուսումնասիրության երկու հիմնական՝ **ավանդական** կամ **փակ նորաստեղծությունների** և **բաց նորաստեղծությունների** հայեցակարգեր: Փակ նորաստեղծությունների հայեցակարգը հիմնված է հետևյալ սկզբունքի վրա. որպեսզի նորարարական գործունեությունը լինի հաջողված, անհրաժեշտ է ճշգրտել մտավոր սեփականության իրավունքները և խիստ վերահսկողություն սահմանել դրանց նկատմամբ: Այս հայեցակարգն առավել իշխող էր 20-րդ դարի սկզբին, երբ համալսարաններն ու կառավարությունները ներգրավված չէին գիտության արդյունքի առևտրայնացման գործընթացում: Նոր արդյունքի մշակման և ստեղծման գործընթացը կազմակերպվում էր ըստ, այսպես կոչված, «փակության» կամ «ինքնաբավության» սկզբունքի:

Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև 1980 թթ. ընդունված էր համարել փակ նորաստեղծությունների կամ ներքին գիտահետազոտական գործունեության ժամանակաշրջան: Պատմական այս ժամանակահատվածում ընկերությունները, որպես կանոն, ունեին իրենց գիտահետազոտական կենտրոնները, որոնք ինքնուրույնաբար էին ներդնում և իրացնում իրենց հետազոտությունների և մշակումների արդյունքները: Սեփական գիտահետազոտական կենտրոնի գոյությունն արդեն իսկ լուրջ խոչընդոտ էր տվյալ ոլորտ մուտք գործել ցանկացող այլ ընկերությունների համար:

Ըստ բաց նորաստեղծությունների հայեցակարգի՝ ընկերությունները չեն կարող զարգանալ՝ հենվելով բացառապես սեփական կարողությունների և հզորությունների վրա. դրանք կարող են բարձրացնել իրենց մրցունակության մակարդակը և ապահովել շուկայական հետագա գործունեությունը՝ օգտագործելով նաև արտաքին միջավայրի ռեսուրսներն ու ներուժը: Բաց նորաստեղծությունների համակարգը ներքին և արտաքին ռեսուրսների համադրման միջոցով գործունեության կազմակերպման գործընթաց է: Դրանց վրա խարսխված գործարարության մոդելների հիմքում այն դրույթն է, ըստ որի՝ արժեքը ձևավորվում է հատուկ մեխանիզմների միջոցով՝ ներքին և արտաքին գաղափարների համադրման արդյունքում:

Համաձայն բաց նորաստեղծությունների հայեցակարգի՝ գիտահետազոտական գործունեությունը բաց համակարգ է՝ ի տարբերություն ձևավորված ավանդական մոտեցումների, երբ նորաստեղծությունը դիտարկվում էր որպես ուղղաձիգ միասնացում ապահովող երևույթ: Այսինքն՝ գիտահետազոտական գործունեության արդյունքները յուրացնում էր դրանք ստեղծող

ֆիրման, ապա տվյալ արտադրանքն արտահանվում էր շուկա: Բաց նորաստեղծությունների հայեցակարգը ենթադրում է արժեքավոր գաղափարների առաջացում ինչպես ընկերության ներսում, այնպես էլ դրանց ներթափանցում արտաքին միջավայրից:

Բաց նորաստեղծությունները հաճախ նույնացվում են ծրագրային ապահովման ոլորտի հետազոտման առանձնահատկություններից մեկի՝ մատչելիության սկզբունքի հետ: Սակայն գոյություն ունեն սկզբունքային տարբերություններ այս մոտեցումների միջև: Բաց նորաստեղծությունների հայեցակարգը դիտարկվում է իբրև գործարարության այնպիսի մոդել, որը հիմնված է ոչ միայն արդյունքի ստեղծման, այլև ձեռք բերելու գաղափարի վրա: Արդյունքը ձեռք է բերվում այն կազմակերպություններից, որոնք չեն կարողանում ժամանակի ճիշտ պահին զգալ շուկայի զարկերակը: Մատչելիության սկզբունքն առավելապես վերաբերում է նորաստեղծությունների գործընթացի ուսումնասիրությանը, մինչդեռ շուկայի այլ մասնակիցների ստեղծած արդյունքների ներգրավումը համարվում է երկրորդային:

Ըստ բաց նորաստեղծությունների հայեցակարգի՝ առավել օգտակար գիտելիքներն ունեն արագ տարածվելու հատկություն, և ամենահզոր գիտահետազոտական կենտրոններն անգամ պետք է օժտված լինեն բարդ իրավիճակում արագ կողմնորոշվելու և արտաքին աղբյուրներից ստացվող գիտելիքները յուրացնելու ունակությամբ, որոնք սեփական ներուժին զուգահեռ կարող են դառնալ նորաստեղծական գործընթացների աղբյուր: Այսինքն՝ ստեղծված գաղափարը որպես հիմք կարող է ծառայել տարբեր ոլորտներում դրա տարածման ու գործադրման միջոցով այլ արդյունքների ստացման համար:

Բաց նորաստեղծությունների հայեցակարգի ակտիվ ջատագովներից մեկը՝ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Հենրի Չեզբրոն¹⁰, բաց նորաստեղծությունները համարում է նորարարությունների նոր դաս, որը թույլ է տալիս ընկերություններին վերազնահատել իրենց շուկայական դիրքերը, ինչն էլ արտացոլվում է վերջիններիս գործարարության ռազմավարության մեջ¹¹:

Հենրի Չեզբրոն նշում է, որ նորաստեղծական գործունեությանը բնորոշ են որոշակի անկանոն (անոմալ) երևույթներ, որոնք նախընթաց հետազոտություններում պատշաճ մեկնաբանություն չեն ստացել¹²: Որպես նման շեղման դրսևորում՝ հեղինակը դիտարկում է արտաքին էֆեկտների երևույթը՝ նշելով, որ նախորդ հետազոտություններում դրանք դիտվել են որպես գործարարության ծախսեր: Մինչդեռ բաց նորաստեղծությունների հայեցակարգը արտաքին էֆեկտները դիտում է որպես կազմակերպության շուկայավարման հետևանք: Սրանք ոչ թե գործարարության ծախսեր են, այլ հնարավորություն, ըստ որի տվյալ ընկերությունն ընդարձակում է իր շուկայական մասնաբաժինը կամ էլ տեխնոլոգիայի տարածման միջոցով անցում կատարում րիզների վարման մեկ այլ մոդելի:

¹⁰ «Բաց նորաստեղծություններ» հասկացությունն առաջին անգամ կիրառել է Հենրի Չեզբրոն:

¹¹ Տե՛ս Chesbrough H., Appleyard M., Open Innovation and Strategy, California Management Review.Vol. 50, no. 1, 2007, էջ 1:

¹² Տե՛ս Chesbrough H., Dynamics of Industry and Innovation: Organizations, Networks and Systems; Open Innovation: A New Paradigm for Understanding Industrial Innovation, Copenhagen, Denmark, June 27–29, 2005, էջ 2:

Հաջորդ շեղումը, որը դիտարկում է հեղինակը, պայմանավորված է մտավոր սեփականության իրավունքի գործոնով: Փակ նորաստեղծությունների մոդելում կազմակերպությունը կուտակած մտավոր սեփականության իրավունքների միջոցով իր աշխատակազմին ազատ ստեղծագործելու հնարավորություն է տալիս, և հիմնական նպատակն այս դեպքում դատական քաշքշուկներից խուսափելն է: Հենրի Չեզբրոն փաստում է, որ ներկայումս շատ արտոնագրեր ցածր շուկայական արժեք ունեն, և դրանց զգալի մասը երբեք չի կիրառվում սեփականատերերի կողմից: Բաց նորաստեղծությունների հայեցակարգը մտավոր սեփականության իրավունքը դիտարկում է որպես նոր դասի ակտիվ, որը կարող է լրացուցիչ եկամուտ ապահովել գործարարությանը, ինչպես նաև ուրվագծել դրա վարման նորանոր ուղիներ¹³:

Հենրի Չեզբրոն, ամփոփելով և ընդհանրացնելով նորաստեղծական գործունեության ոլորտի վերաբերյալ գոյություն ունեցող հետազոտությունները, դրանք դասակարգում է երկու խմբի՝ փակ և բաց նորարարությունների հայեցակարգերի, ապա հստակեցնում դրանց հիմնական տարբերությունները:

Առաջին՝ փակ նորաստեղծությունների մոդելում արտաքին գիտելիքներն ունեն կարևոր, սակայն լրացուցիչ բնույթ, մինչդեռ բաց նորաստեղծությունների մոդելում և՛ ներքին, և՛ արտաքին գիտելիքները դիտվում են որպես համարժեք ռեսուրսներ: **Երկրորդ՝** նախորդ հետազոտությունները կառուցված են այն տրամաբանությամբ, որ գիտահետազոտական ծրագրերի գնահատումը բացառում է որևէ սխալ: Մինչդեռ նոր հայեցակարգը դրանց առկայությունը հնարավոր է համարում: **Երրորդ՝** նախորդ հայեցակարգերը պատշաճ ձևով չեն մեկնաբանում գիտելիքների և տեխնոլոգիաների կիրառման և գործադրման արտաքին հետևանքները: Բաց նորաստեղծությունների մոդելներում արտաքին էֆեկտները դիտվում են որպես ընկերության այլընտրանքային գործունեության ձևեր, որոնցից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում կարող է դառնալ ընկերության հիմնական գործունեության տեսակը: **Չորրորդ՝** փակ մոդելում օգտակար գիտելիքը դիտվում է որպես դժվարհասանելի ակտիվ, մինչդեռ բաց նորաստեղծությունների մոդելն այն դիտարկում է որպես արագ տարածման միտում ունեցող յուրօրինակ գործոն: **Հինգերորդ՝** փակ մոդելում կարևորվում է «մարդ-հանձարի» գործոնը, որի նորարարական գաղափարների գործադրումը պետք է ընկերությանն ապահովի աննախադեպ զարգացում, մինչդեռ, ըստ բաց մոդելի, ընկերությունը չպետք է վերակառուցվի, այլ պետք է փորձի օգտագործել արտաքին միջավայրի ընձեռած հնարավորությունները: **Վեցերորդ՝** փակ մոդելում մտավոր սեփականությունը դիտվում է որպես ածանցյալ արդյունք, որի օգտագործման իրավունքը խիստ սահմանափակ է: Բաց մոդելում սա մտավոր սեփականության կիրառման բազմաթիվ ձևերից մեկն է միայն¹⁴:

Այսպիսով՝ վերոնշյալ հայեցակարգերի դասակարգումը հետևանք է նորաստեղծությունների ոլորտում կատարված փոփոխությունների, որոնք անհրաժեշտ է վերլուծել և գնահատել: Այդ փոփոխություններն, իրենց հերթին, աշխատանքի յուրօրինակ բաժանման ձևի դրսևորում են, երբ տեխնոլոգիայի ստեղծումն ու կիրառումը իրականացնում են ոչ թե նույն, այլ տարբեր ընկերություններ: Դրանց մի մասը դառնում է նոր տեխնոլոգիաներ գործադրող,

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 3:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 9-13:

մյուս մասը՝ դրանք մշակող և ստեղծող: Այսինքն՝ նորարարական մշակումները կարող են դիտվել նաև որպես վերջնական արդյունքներ, այլ ոչ թե միայն ընկերության արտադրական գործունեության իրականացման միջանկյալ օղակներ:

Նորարարությունների շուկայում դրսևորվող շեղումների հիմքում այն հարցն է, թե ինչու են ընկերությունները պատրաստ օտարելու մենաշնորհային առավելություն ենթադրող այնպիսի գործոն, ինչպիսին նոր տեխնոլոգիական գիտելիքներն են: Չէ՞ որ դրանք գերշահույթի երաշխիքներ են, այսինքն՝ գործոններ, որոնք իրենց սեփականատերերին կարող են օժտել մրցակցային աննախադեպ առավելություններով: Խնդիրն այն է, որ մտավոր սեփականության իրավունքների փոխանցումը (ամբողջությամբ կամ մասնակի) կամ դրանց նկատմամբ մատչելիության սահմանումը ընկերությունների ապագա եկամուտների ստացման երաշխիքներ են: Այսինքն՝ շուկայի այլ մասնակիցներին իրենց արդյունքներից ազատ օգտվելու հնարավորության տրամադրումը նպատակ է հետապնդում հետագայում ստանալու ավելի մեծ օգուտներ: Այս գործընթացն ուղեկցվում է նաև շատ այլ շեղումներով, որոնք բնորոշ են գույտ նորարարական արդյունքների շուկային:

Բաց նորաստեղծությունների գործընթացի գնահատումը մեծածավալ տվյալներ պահանջող ձեռնարկ է, քանի որ ժամանակակից վիճակագրությունը չի տիրապետում տվյալների նման բազաների: Ուստի առաջանում են որոշակի դժվարություններ: Նորաստեղծական գործընթացների գնահատման հիմնական տեղեկատվական աղբյուրը լայնածավալ հարցումներն են, ինչպես նաև այն տվյալները, որոնք հրապարակվում են ոլորտի հետազոտությամբ զբաղվող տարբեր կառույցների կողմից:

Բաց նորաստեղծությունների հայեցակարգի շատ դրույթներ օգտակար են նաև ազգային տնտեսությունների մակարդակով գնահատումներ իրականացնելիս: Այսինքն՝ բաց նորարարությունների մոդելը, որպես ընկերության կառավարման հայեցակարգ, ընդլայնում է իր ընդգրկման տիրույթը՝ որպես տեսական հիմք ծառայելով մակրոմակարդակում մի շարք վերլուծությունների համար¹⁵: Հրապարակված ուսումնասիրությունների արդյունքները տարբեր են: Օրինակ՝ ինչպես փաստում են «Բաց նորարարությունները Եվրոպայում. արդյունքներ, գործոններ և քաղաքականություն»¹⁶ զեկույցի հեղինակները, Հ. Չեզբրոյի այն գաղափարը, ըստ որի՝ գոյություն ունի հակադարձ կապ կազմակերպության գիտահետազոտական ներքին գործունեության և բաց նորարարության գործընթացի միջև, չի հաստատվում իրենց հետազոտություններով:

Գոյություն ունեն բաց նորաստեղծությունների գնահատման մի շարք ցուցանիշներ, օրինակ՝ արտաքին նորամուծությունների և հետազոտությունների նպատակով կատարվող ծախսերի, ինչպես նաև մտավոր սեփականության պաշտպանության համար իրականացվող ծախսերի ծավալները: Գիտահետազոտական ծրագրերում կատարված ներդրումները, ստեղծված

¹⁵ Տե՛ս, օրինակ՝ Analysis of Innovation Drivers and Barriers in Support of Better Policies, Economic and Market Intelligence on Innovation, Open Innovation in Europe: effects, determinants and policy, Report, Prepared for: European Commission Directorate-General Enterprise Unit D1 Policy Development for Industrial Innovation, Bernd Ebersberger, Sverre J. Herstad, Eric Iversen, Eva Kirner, Oliver Som, Oslo, July 19, 2011:

¹⁶ Տե՛ս նույն աղբյուրը:

ամբողջական արդյունքում նորարարական հետազոտություններին հատկացված միջոցների տեսակարար կշիռը, տրամադրված արտոնագրերի քանակը գնահատում են բաց նորաստեղծությունների արտաքին կողմը: Այս պարագայում տեխնոլոգիական համագործակցությունը քննարկվում է որպես տարբեր մասնակիցների միջև գործընթաց: Թույլտվությունների վերաբերյալ տվյալները գնահատում են բաց նորաստեղծական գործընթացների ներքին կողմը: Ներկայացվածը ոլորտի հետազոտություններում կիրառվող ցուցանիշների միայն մի մասն է՝ թերևս առավել լայն տարածում ստացածը, սակայն գոյություն ունեն նաև գնահատման այլ մոտեցումներ:

Բաց նորաստեղծությունների գործընթացները հայաստանյան շուկայում իրենց դրսևորման առանձնահատկություններն ունեն: Այսպես՝ ի տարբերություն նորարարական արդյունքների շուկայի հարուստ փորձ ունեցող երկրների, որոնք անցել են շուկայի ձևավորման բոլոր փուլերով, մեր շուկան աշխատում է ներմուծել այն ենթակառուցվածքները, որոնք թույլ կտան ներդնել զարգացած շուկաների հարուստ փորձը: Օրինակ՝ մենաշնորհի փուլը, որը բնութագրական է այս ոլորտի շուկաներին, չի կարող կիրառելի լինել հայաստանյան նորարարական արդյունքների շուկայում: Պատճառները շատ են: Նախ՝ միջազգային ասպարեզում արդեն իսկ կայացած և իրենց դիրքերն ամրապնդած ընկերությունները բազմաթիվ են: Բացի դրանից, նորարարական գործընթացների «բաց» բնույթի ձևավորումը բնական էվոլյուցիայի հետևանք է, քանի որ այն շուկայի մասնակիցների համար ստեղծում է առավել բարենպաստ պայմաններ: Այսպիսով՝ Հայաստանը հանդես է գալիս որպես միջազգային փորձի ներդրման փուլում գտնվող երկիր, որի նորարարական արդյունքների շուկան գործում է բաց նորարարությունների հայեցակարգի «խաղի կանոններով»:

«Գլոբալ նորարարական ինդեքս» հետազոտության հրապարակած տվյալների համաձայն՝ գիտահետազոտական գործունեությանը հատկացված ծախսերը 2012 թ. կազմում են ՀՆԱ ծավալների 2.7%-ը¹⁷. այս ցուցանիշով Հայաստանը 141 երկրների շարքում զբաղեցնում է 10-րդ տեղը, ինչը բավականին լավ արդյունք է: Սակայն դժվար է գնահատել, թե նշված ծախսերը որքանով են փոխհատուցվում, այսինքն՝ կատարված հետազոտությունների որ մասն է դառնում շուկայական բարիք:

Մտավոր սեփականության օբյեկտների փոխանցման հիմնախնդիրը

Մտավոր սեփականության արդյունքների պատշաճ իրավական պաշտպանությունը, բացի իրավաբանական տեսանկյունից, մեր կարծիքով, նաև հստակ տնտեսական բովանդակություն ունի: Այն կոչված է հնարավորինս ներդաշնակեցնելու երկու հակասական գործընթացներ. մի կողմից՝ խրախուսել և խթանել նորամուծություններին ու նոր տեխնիկական գիտելիքների ստեղծմանը միտված ստեղծագործական աշխատանքը, մյուս կողմից՝ նպաստել ստեղծված նոր տեխնիկական գիտելիքների՝ նվազագույն ծախսումներով փոխանցմանը: Հասկանալի է, որ, առանց մտավոր սեփականության իրավունքի հուսալի պաշտպանության, անհնար կլինի ապահովել ստեղծագործական աշխատանքի շարունակականությունը: Այս խնդիրը լուծվում է

¹⁷ St'u The Global Innovation Index 2012: Stronger Innovation Linkages for Global Growth, Editor Soumitra Dutta, . INSEAD and WIPO 2012, էջ 184:

ինչպես միջազգային, այնպես էլ ազգային արտոնագրային օրենսդրությունների միջոցով:

Արտոնագրային իրավունքը ծառայում է որպես շուկայական տնտեսական համակարգի անկատարությունը հավասարակշռելու գործիք: Դա պայմանավորված է նրանով, որ զուտ շուկայական համակարգում նոր ապրանքի ի հայտ գալուն պես, նմանակող մրցակիցներն անմիջապես դա «պատճենում են» և գինը նվազեցնում՝ հասցնելով մինչև արտադրական ծախսերի մակարդակ, որի հետևանքով ստացված շահույթով հնարավոր չի լինում փոխհատուցել հետազոտության և մշակումների վրա կատարված ծախսերը: Արտոնագրային իրավունքը, այսպիսով, որոշակիորեն սահմանափակում և զսպում է նմանակողների մրցակցային ճնշումը նորաստեղծություն իրականացնող շուկայի սուբյեկտների վրա¹⁸:

Այն դեպքում, երբ մտավոր սեփականության օբյեկտը (օրինակ՝ գյուտը) պաշտպանված է արտոնագրով, սահմանափակ ժամանակում սեփականատիրոջը ապահովում է շուկայական մենաշնորհ: Վերջինս կարող է ստանալ մենաշնորհային բարձր եկամուտ կամ ձեռնարկատիրական շահույթ (կամ քվադրենտա) ու այդպիսով փոխհատուցել հայտնագործությունների և մշակումների հետ կապված ծախսերը: Այդ ծախսերը, որպես կանոն, չեն կարող փոխհատուցվել այլ կերպով, քան արտոնագրատիրոջ՝ մենաշնորհային դիրք զբաղեցնելու միջոցով:

Արտոնագրերի սահմանափակ մենաշնորհային դրույթի շրջանակներում համապատասխան պաշտպանություն տրամադրելիս հանրային օգուտը հայտնագործությունների խթանման մեջ է՝ պայմանավորված արտոնագիր ստանալու, այսինքն՝ մենաշնորհային դիրք ունենալու հեռանկարով, իսկ հասարակական վնասն արտահայտվում է արտոնագրով հաստատված հայտնագործությունների օգտագործման սահմանափակմամբ: Այստեղ ծագում է մտավոր սեփականության բացառիկ իրավունքի գործողության օպտիմալ ժամկետ սահմանելու հարցը, որի վերաբերյալ տնտեսական մոդելները առաջին անգամ ներկայացրել է Է. Քաուֆերը¹⁹:

Գյուտի կամ հայտնագործության արտոնագրային պաշտպանությունն այն մեխանիզմն է, որով երաշխավորվում է ոչ միայն դրա ստեղծման վրա ծախսված նյութական և մտավոր ռեսուրսների վերականգնումը, այլև շահույթի ստացումը: Այդ իմաստով, խելամիտ ու հավասարակշռված պատենտային քաղաքականությունն այն գործիքն է, որով ապահովվում է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների շարունակականությունը և ներդրումների հետագա ներգրավումը նորամուծական ծրագրերում:

Արտոնագրի գործողությունը, փաստորեն, որոշակի ժամանակամիջոցում նորույթի տիրոջը երաշխավորում է դրա բնականոն առևտրայնացումը, երբ տեղի է ունենում նոր տեխնոլոգիայի սահուն հարմարեցումը գործարար միջավայրին, կամ էլ դրա հիման վրա նոր գործարարություն է ստեղծվում: Այսպիսով՝ արտոնագրային համակարգը թույլ է տալիս նորամուծություններին առնչվող մի շարք խնդիրներ լուծել:

¹⁸ Տե՛ս **Сепреев А.**, Экономический анализ интеллектуальной собственности. www.bmpravo.rushow_stat.phpstat=711:

¹⁹ Տե՛ս **Kaufer E.**, The Economics of the Patent System. Harwood Academic Publishers GmbH, 1989, էջ 53:

- նպաստում է նոր տեխնոլոգիաների, արտադրանքի, գյուտերի ու հայտնագործությունների ստեղծմանը,
- նպաստավոր իրավական միջավայր է ստեղծում այս կամ նորամուծության մեջ ներդրումներ անելու ու դրա հիման վրա արդյունաբերական քաղաքականություն իրականացնելու համար,
- գյուտերի և հայտնագործությունների փոխանցման ու առևտրայնացման ուժեղ խթանիչ է դառնում,
- ձևավորվում է արդյունաբերական ծրագրավորման գործընթացը, քանի որ ավելի կանխատեսելի է դառնում նոր տեխնոլոգիաներում արված ներդրումը:

Համակողմանիորեն մշակված ազգային արտոնագրային օրենսդրությունը, ըստ էության, զգալիորեն նվազեցնում է նորամուծություններում կատարված ներդրումների ռիսկը, քանի որ չի թողնում, որ տեխնոլոգիայի փոխանցումն արվի սոսկ գործարքի պայմանագրի հիման վրա ու բացառում է երրորդ անձանց կողմից դրա ապօրինի կրկնօրինակումը: Արտոնագրի առկայությունը նվազեցնում է նաև նոր տեխնոլոգիան ստացողի (գնողի) ռիսկը, քանի որ այդ դեպքում վերջինս նորույթին (նոու-հաու) ծանոթանալու ընթացքում երաշխավորված է լինում գաղտնի տեղեկությունների հնարավոր արտահոսքի հետ կապված պատասխանատվությունից:

Հավասարակշռված արտոնագրային համակարգը, փաստորեն, նոր տեխնոլոգիական հնարավորությունների ամրագրումն է՝ որոշակի հիմքեր ստեղծելով մասնակի տեխնոլոգիական նորամուծությունների համար: Բացի այդ, տեղի է ունենում արդյունաբերության տեխնոլոգիական կառուցվածքի նորացում: Առանց զարգացած արտոնագրային համակարգի, թերևս, անհնար է մրցունակ շուկայական ենթակառուցվածք ձևավորել:

Ներկայացնենք որոշակի ամփոփ վիճակագրական տվյալներ ՀՀ մտավոր սեփականության ներուժի և դրա զարգացման միտումների վերաբերյալ, ինչպես նաև փորձենք համեմատականներ անցկացնել այլ՝ մասնավորապես ԱՊՀ երկրների հետ (մոդելների հայտերի վերաբերյալ վիճակագրական տվյալները և դրանց շարժը ներկայացված է աղյուսակ 1-ում):

Ըստ աղյուսակ 1-ի՝ 1993 թ. մինչև 2012 թ. մտավոր սեփականության իրավունքների գործակալություն է ներկայացվել գյուտերի և օգտակար մոդելների 3773 հայտ, որից 3203-ը՝ ազգային, իսկ 570-ը՝ օտարերկրյա հայտատուների կողմից: Պետք է նշել, որ 1997-1998 թթ. նկատվել է հայտատուների քանակի կտրուկ անկում, մի բան, որ դիտվել է նաև 2004 և 2006 թվականներին: 1996 թ. ի վեր արձանագրվում է նաև օտարերկրյա հայտատուների քանակի զգալի անկում, որի հիմնական պատճառը 1996 թ. հուլիսի 27-ին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ամրագրված տուրքերի դրույթաչափերի քառապատկումը կարող է լինել:

Հայաստանյան մտավոր սեփականության օբյեկտների փոխանցման վիճակը ներկայացնում են լիզինգային և զիջման մասին պայմանագրերի վերաբերյալ վիճակագրական տվյալները (աղյուսակ 2):

Աղյուսակ 1

ՀՀ գյուտերի և օգտակար մոդելների հայտերի շարժը 1993-2012 թթ.*

Տարեթիվ	Գյուտերի և օգտակար մոդելների հայտեր		
	Ընդամենը	Ազգային	Օտարերկրյա
1993	217	184	33
1994	233	154	79
1995	293	195	98
1996	316	162	154
1997	118	62	56
1998	83	75	8
1999	128	112	16
2000	128	120	8
2001	168	153	15
2002	222	214	8
2003	161	156	5
2004	144	129	15
2005	231	226	5
2006	214	213	1
2007	147	140	7
2008	239	233	6
2009	168	157	11
2010	187	177	10
2011	194	166	28
2012	182	175	7
Ընդամենը	3773	3203	570

* Աղբյուրը՝ <http://aipa.am/>

Ըստ աղյուսակ 2-ի տվյալների՝ 2001-2012 թթ. ՀՀ-ում գրանցվել է 1082 պայմանագիր. գերակշիռ մասը՝ 77,2 տոկոսը, ապրանքային նշանների զիջման վերաբերյալ պայմանագրերն են։ Ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին պայմանագրերը կազմում են ընդամենը 17 տոկոս։ Մինչդեռ, բավական ցածր տեսակարար կշիռ ունեն գյուտի արտոնագրերի զիջման, արտոնագրային հասարակ և բացառիկ լիցենզիայի տրամադրման մասին պայմանագրերը (4,8 տոկոս)։ Նշենք, որ դիտարկվող ժամանակահատվածում ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջև։

Աղյուսակ 2

ՀՀ լիցենզային և գիջման պայմանագրերի քանակի շարժը (2001-2012 թթ.)*

Տարեթիվ	Ընդամենը	Ապրանքային նշանների գիջման մասին	Ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին	Գյուտի արտոնագրի գիջման, արտոնագրային հասարակ լիցենզիա և արտոնագրային բացառիկ լիցենզիա տալու մասին
2001	64	59	3	2
2002	70	56	12	2
2003	68	53	14	1
2004	69	60	8	1
2005	103	79	19	5
2006	134	104	21	9
2007	95	77	15	3
2008	85	60	20	5
2009	97	68	23	6
2010	91	69	15	7
2011	75	54	18	3
2012	131	97	16	8
Ընդամենը՝	1082	836	184	52

* Աղբյուրը՝ www.aipa.am

Այսպիսով՝ տնտեսական զարգացումը մեր օրերում պայմանավորված է առաջադիմական տեխնոլոգիական փոփոխությունների ու գիտելիքների վրա հիմնված շարունակական նորաստեղծություններով: Մրցակցային պայքարում հաջողություն ունենալու և շուկայում երկարաժամկետ շահեկան դիրք զբաղեցնելու համար ընկերությունները հարկադրված են դիմելու ոչ ավանդական նորաստեղծությունների իրականացմանը, ինչը ենթադրում է տեխնոլոգիական գիտելիքների ստեղծման ու դրանց առևտրայնացման խիստ փակ ընթացակարգերի գործադրում: Դա նաև նշանակում է որոշակի առումով բացել հետազոտական ու փորձարարական աշխատանքների սեփական «խոհանոցի» գաղտնիքները ներկա ու ապագա հնարավոր մրցակիցների առջև: Այսօրինակ վարքագիծը թելադրված է արդի պայմաններում գիտական հետազոտությունների ոլորտում տեղեկատվության և գիտելիքների հոսքի ինտենսիվացման, գործարարության և շուկայական ռիսկերի մեծացման, ընկերությունների միջև մրցակցության և համագործակցության նոր իրողությունների առաջացմամբ:

АТОМ МАРГАРЯН

Декан факультета регулирования экономики и международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук, доцент

АСМИК ДЖУГАРЯН

Ассистент кафедры экономической теории АГЭУ, кандидат экономических наук

Открытые инновационные системы в процессе технологических изменений.-

В статье рассматривается одна из современных моделей модернизации экономики, основанная на концепции открытых инноваций. Задача рассматривается в контексте технологических изменений.

В статье изучены проблемы соотношения имитационных и инновационных процессов, являющихся ключевыми для развивающихся и переходных экономик. В частности, был обоснован тезис, согласно которому для трансформационной экономики больше подходит применение модели открытой инновации, так как в этом случае инновационные проекты осуществляются наименьшими затратами.

Концепция открытых инноваций рассматривается в контексте создания и эффективной коммерциализации объектов интеллектуальной собственности. С этой точки зрения изучаются наиболее приемлемые варианты спецификации прав на новейшие технологии и новые продукты.

АТОМ МАРГАРЯН

Dean of the Department of Regulation of Economy and International Economic Relations at ASUE, PhD in Economics, Associate Professor

АСМИК ДЖУГАРЯН

Associate Professor at the Chair of „Theory of Economics” at ASUE, PhD in Economics

Open Innovation Systems in the Process of Technological Changes.-

The article discusses contemporary models of modernization of the economy, based on the concept of open innovations. The problem is considered in the context of technological changes.

Technological problems of innovation and correlation are studied in the given article as a key technology for developing countries and those in transition. In particular, the provision is justified by the emerging economies where the model of open innovations should be viewed as an execution model, because in that case innovations are typically lower in cost.

The concept of open innovations is discussed in the context of intellectual property creation and transfer. These are considered in terms of new technologies and new products in tagging the most preferred options.